



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

13 հունվարի 2021 թվականի թիվ 5-Ա

ք. Երևան

«ԷՖ ՆԵԹ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՄԱԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով դիմումի հիման վրա 2020 թվականի դեկտեմբերի 08-ին հարուցված թիվ 9 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*:

2020 թվականի դեկտեմբերի 08-ին Հանձնաժողով մուտքագրված «ՀԻԲԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) դիմումում նշված է ցանցային օպերատոր «ԷՖ ՆԵԹ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ ցանցային օպերատոր) կողմից «Շանթ» տեսալսողական ծրագիրը առանց պայմանագրային հիմունքների վերահաղորդելու փաստի վերաբերյալ:

Ըստ Ընկերության՝ Հանձնաժողովի 2020 թվականի հուլիսի 24-ի թիվ 68-Ա որոշման համաձայն, ցանցային օպերատորը իրավունք ունի «Շանթ» տեսալսողական ծրագիրը վերահաղորդել մինչև 2020 թվականի դեկտեմբերի 01-ը: Սակայն ցանցային օպերատորի կողմից առանց պայմանագրային հիմունքների շարունակվում է Հայաստանի Հանրապետության տարածքում վերահաղորդվել «Շանթ» տեսալսողական ծրագիրը, որի բացառիկ դիստրիբյուտորը Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքում հանդիսանում է Ընկերությունը:

Դիմումում նշված է նաև, որ Ընկերության և ցանցային օպերատորի միջև տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավունքի տրամադրման լիցենզիոն պայմանագիր կնքված չէ, որը թույլ կտա ցանցային օպերատորին Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնել նշված տեսալսողական ծրագրի վերահաղորդումը և խնդրում է միջոցներ ձեռնարկել ցանցային օպերատորի կողմից անօրինական վերահաղորդումը դադարեցնելու ուղղությամբ:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով և հիմք ընդունելով Ընկերության դիմումը՝ 2020 թվականի դեկտեմբերի 08-ին ցանցային օպերատորի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը հարուցված վարույթի մասին 2020 թվականի դեկտեմբերի 11-ին ծանուցել է ցանցային օպերատորին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող է ներկայացնել իր պարզաբանումները, բացատրությունները և վերահաղորդման իրավական հիմքերը:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում ցանցային օպերատորը Հանձնաժողով գրավոր բացատրություն չի ներկայացրել:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և 42-րդ հոդվածով, համաձայն որի Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով և հիմք ընդունելով Հանձնաժողովի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 51-Ս հրամանը՝ իրականացրել է ցանցային օպերատորի մոտ մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով:

Տեղում դիտարկում իրականացնելու արդյունքում 2020 թվականի դեկտեմբերի 25-ին Հանձնաժողովի կողմից կազմվել է արձանագրություն, համաձայն որի՝ հեռարձակող կայանում, ժամը 11:00-11:25-ն ընկած ժամանակահատվածում ցանցային օպերատորի կողմից մի շարք տեսալսողական ծրագրերի հետ մեկտեղ վերահաղորդվում է նաև «Շանթ» տեսալսողական ծրագիրը:

Մշտադիտարկման արդյունքների մասին արձանագրությունը ստորագրել են Հանձնաժողովի և ցանցային օպերատորի ներկայացուցիչները:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված և ներկայացրած փաստերը, որոնք համադրվել են Հանձնաժողովի իրականացրած տեղում դիտարկման արդյունքներին, որի արդյունքում հայտնի է դարձել, որ ցանցային օպերատորի կողմից առանց պայմանագրի իրականացվում է «Շանթ» տեսալսողական ծրագրի վերահաղորդում:

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է ցանցային օպերատորի կողմից իրականացված իրավախախտում, այն է՝ առանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության ոչ սեփական տեսալսողական ծրագրի վերահաղորդման իրականացում:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է՝ ոչ սեփական տեսալսողական հաղորդումները կարող են հեռարձակվել միայն դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահաղորդվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմինն գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

- 1) գրավոր նախազգուշացում.
- 2) տուգանք.
- 3) հեղինակագորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.
- 4) հեղինակագորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում»:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ցանցային օպերատորի կողմից առանց պայմանագրի վերահաղորդում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.04 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 15-րդ մասը սահմանում է. «15. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, սույն օրենքով նախատեսված տուգանքները կիրառվում են 50 տոկոսի չափով:»

«ԷՖ ՆԵԹ» ՍՊ ընկերությունը 2020 թվականի սեպտեմբերի 14-ին գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել է հասույթի չափի վերաբերյալ տեղեկություն, համաձայն որի հասույթը կազմում է 613 728 935 (վեց հարյուր տասներեք միլիոն յոթ հարյուր քսանութ հազար ինը հարյուր երեսունհինգ) ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի, 49-րդ հոդվածի 1-ին մասի, 57-րդ հոդվածի 6-րդ մասի և 60-րդ հոդվածի 15-րդ մասի դրույթները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց.**

1. «ԷՖ ՆԵԹ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել տույժ՝ տուգանելով 122 746 (հարյուր քսաներկու հազար յոթ հարյուր քառասունվեց) ՀՀ դրամի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ՝**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

13 հունվարի 2021թ.

ք. Երևան